UFAR ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ձեր **ապագան** մեր **առաքելությունն է**

ԴԻՄՈՐԴԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ 2026

Սիրելի՛ դիմորդներ,

Ընդունվելով Հայաստանում ֆրանսիական համալսարան՝ դուք ընտրում եք որակյալ կրթություն՝ հիմնված ակադեմիական գերազանցության, միջազգային փորձի և քաղաքացիական ներգրավվածության վրա: Արդեն 25 տարի է՝ ՀՖՀՀ-ն կրթում է ապագա առաջնորդների մեր դասախոսների և բարձրակարգ մասնագետների խիստ և նորարարական մանկավարժության շնորհիվ: Այստեղ դուք կզարգացնեք տեսական և գործնական կայուն հմտություններ ձեր հավակնոտ մասնագիտական ուղին կերտելու համար:
Ամառային դպրոցներ, գիտաժողովներ, վարպետաց դասեր, մասնագիտական պրակտիկաներ, շարժունության ծրագրեր, մշակութային և հասարակական գործունեություն. այս փորձառություններն ավելի հարուստ կդարձնեն ձեր ուսանողական առօրյան, կնպաստեն ձեր ինքնուրույնությանը և կզարգացնեն նախաձեռնողականությունն ու պատասխանատվության զգացումը: Ֆրանսիայում և Հայաստանում ճանաչված դիպլոմների շնորհիվ դուք կունենաք բոլոր անհրաժեշտ բանալիները՝ հաջողելու պետական, մասնավոր, գիտական կամ ձեռնարկատիրական ոլորտներում՝ թե՛ ազգային, թե՛ միջազգային ասպարեզում:

Միացե՛ք ՀՖՀՀ-ին, ընտրե՛ք գերազանցությունը:
Ձեր ապագան մեր առաքելությունն է:

Դոկտոր Սալվա Նակուզի
ՀՖՀՀ ռեկտոր

ՏԵՍԼԱԿԱՆ

Դառնալ Կովկասում բարձրագույն կրթության առաջատարներից մեկը և օրինակելի ֆրանսիական համալսարան արտերկրում:

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

Կրթել դինամիկ և ճկուն երիտասարդների՝ զգոն համաշխարհային սոցիալական մարտահրավերների և մշակութային տարբերությունների նկատմամբ:

ՀՖՀՀ-Ն ԹՎԵՐՈՎ

5

ֆակուլտետ՝
Ինֆորմատիկա
և կիրառական
մաթեմատիկա,
Իրավագիտություն,
Կառավարում,
Մարքեթինգ,
Ֆինանսներ

2

**պետական
դիպլոմ՝**
հայկական և
ֆրանսիական
(եվրոպական),
որը ճանաչվում է
ողջ աշխարհում

3%

2024 թվականի
շրջանավարտների
ընդամենը **3%-ն
է աշխատանք
փնտրում**

3700

շուրջ 3700
շրջանավարտ

UFAR
UNIVERSITE FRANCAISE EN ARMENIE

ԻՆՉՈՒ՞ ԸՆՏՐԵԼ ՀՖՀՀ-Ն

Հաջողություն մասնագիտական կարիերայում

- Շրջանավարտների՝ աշխատանքի տեղավորման բարձր ցուցանիշ (2024 թվականի շրջանավարտների 3%-ն է աշխատանք փնտրում

- Ձեռնարկատիրական հմտությունների զարգացման խթանում Ձեռնարկատիրության կենտրոնի միջոցով

- Մասնագիտական պրակտիկա առաջատար ձեռնարկություններում և պետական կառույցներում

Հավասար հնարավորություններ

- Ակադեմիական կրթաթոշակներ և սոցիալական օգնություն

- Կրթական աջակցություն ուսանողներին (ամառային հավելյալ դասընթացներ)

- «Զինվորական ծառայությունից վերադարձած ուսանողներին դեպի հաջողություն ուղեկցելու» նախագիծ (**PREMS**)

Միջմշակութային մթնոլորտ

- Ֆրանսախոս միջավայր

- Շարունակական շփում օտարերկրացի դասախոսների հետ՝ սկսած բակալավրի 3-րդ կուրսից
Մասնագիտական պրակտիկա արտերկրում

Բարձր որակի միջազգային կրթություն

- Բարձր որակի միջազգային կրթություն
Ժան Մուլեն Լիոն 3 և Թուլուզի համալսարանների հետ համագործակցություն

- Երկու դիպլոմ՝ հայկական և ֆրանսիական/եվրոպական, որ ճանաչվում է ողջ աշխարհում

- Օտար լեզուների ուսուցում. ՀՖՀՀ-ում ուսանողները, բացի մասնագիտությունից, սովորում են ֆրանսերեն, անգլերեն, ռուսերեն, ցանկության դեպքում՝ նաև իսպաներեն կամ գերմաներեն

- Միջազգային շարժունության ծրագրերի միջոցով արտերկրում ուսանելու հնարավորություն

- Արտերկրում պրակտիկա անցնելու հնարավորություն

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Կրթությունը ՀՖՀՀ-ում

Բակալավր

Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)
Իրավագիտություն
Կառավարում
Մարքեթինգ
Ֆինանսներ

Մագիստրատուրա

Իրավագիտություն
Մարքեթինգ և վաճառք
Տեղեկատվական համակարգեր՝ արհեստական բանականությամբ համակարգեր
Ֆինանսներ (ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ)

Ֆրանսիական/եվրոպական դոկտորանտուրա

Համակարգչային գիտություն
Հանրային և մասնավոր իրավունք
Տնտեսագիտություն

ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ

(համակարգչային գիտություն)

Ակադեմիական գործընկեր՝ Թուլուզի համալսարան

Ուսման տևողությունը՝ 4 տարի

Աշխարհի առաջատար երկրներն այսօր զարգանում են նորարար տեխնոլոգիաների շնորհիվ (արհեստական բանականություն, քվանտային հաշվարկներ, արբանյակային և խելացի համակարգեր), որոնք ոչ միայն թռիչքային աճ են ապահովում, այլ նաև ազգային անվտանգություն և բարեկեցություն:

Այս համատեքստում Հայաստանի զարգացման համար առանցքային է համակարգչային գիտության խորացված ու ժամանակակից ուսուցումը: ԻԿՄ ֆակուլտետը ձգտում է կրթել առաջադեմ հայ մասնագետների, որոնք կմիանան միջազգային տեխնոլոգիական մրցակցությանը՝ միաժամանակ զարգացնելով գիտությունն ու նորարարությունը հայրենիքում՝ հանուն երկրի ապագայի:

Ինֆորմատիկայի (համակարգչային գիտություն) բակալավրի կրթական ծրագիրը մշակվել է Թուլուզի համալսարանի հետ համատեղ:

Համակարգչային գիտության բակալավրի կրթական ծրագրի գիտելիքներն ու հմտությունները մշակվել են ABET-ի և Հաշվողական մեքենաների ասոցիացիայի(ACM) համակարգչային գիտությունների ուսումնական պլանի պահանջներին համահունչ:

Գործնական կրթությունն ի սկզբանե միջազգային միջավայրում

ԻԿՄ ֆակուլտետում համակարգչային գիտությունը ոչ միայն տեսական, այլ նաև գործնական հզոր հիմք ունի:

Ուսումնական ծրագրի շուրջ մեկ երրորդը նվիրված է մասնագիտական նախագծային աշխատանքների, որոնք իրականացվում են արդյունաբերության և գիտահետազոտական թիմերի հետ համագործակցությամբ:

Ուսանողները մասնակցում են յոթ մասնագիտական նախագծերի, որոնք նախատեսում են համալսարանում ստացած գիտելիքների գործնական կիրառում իրական խնդիրների լուծման միջոցով:

Այս նախագծերը նպաստում են հմտությունների զարգացմանն ու մրցունակ մասնագետների ձևավորմանը:

Դասավանդումն իրականացվում է հայերեն, անգլերեն և ֆրանսերեն: Մասնագիտական առարկաները երկրորդ կուրսից դասավանդվում են անգլերեն, իսկ երրորդ կուրսից՝ նաև ֆրանսերեն:

Բակալավրի կրթական ծրագրում ընդգրկված են ինչպես տեսական դասախոսություններ, այնպես էլ գործնական պարապմունքներ և լաբորատոր աշխատանքներ՝ համապատասխան Թուլուզի համալսարանի և ՀՖՀՀ-ի կողմից հաստատված միջազգային չափորոշիչների:

Առանձին դասընթացներ, ինչպիսիք են օպերացիոն համակարգերը, համակարգչային ճարտարապետությունը, ֆունկցիոնալ և զուգահեռ ծրագրավորումը, տեսապատկերների ու ձայնային ազդանշանների մշակումը, դասավանդվում են Թուլուզի ինֆորմատիկայի հետազոտական ինստիտուտի՝ IRIT-ի գիտնականների կողմից:

IRIT-ը Եվրոպայի ինֆորմատիկայի առաջատար կենտրոններից մեկն է:

Դասերը կազմակերպվում են ՀՀ ԳԱԱ Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի մասնաշեմքում՝ ժամանակակից տեխնիկական հագեցվածությամբ լսարաններում և համակարգչային լաբորատորիաներում:

Մասնագիտական նախագծերը զարգանում են ՀՖՀՀ-ի արդյունաբերական և ակադեմիական գործընկերների հետ համագործակցությամբ և մասնակցությամբ:

Ուսումնառությունը պահանջում է ակտիվ ներգրավվածություն՝ շաբաթական միջինում 24-30 ժամ լսարանային պարապմունք, ինչպես նաև օրական 3-4 ժամ ինքնուրույն և թիմային աշխատանքներ:

ՀՖՀՀ-ի ԻԿՄ ֆակուլտետը կընդունում է մասնագետների, որոնք ձևավորում են Հայաստանի և միջազգային տեխնոլոգիական ոլորտի ապագան:

Վահե Միրզոյան
ԻԿՄ ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանող

Ընտրելով ՀՖՀՀ-ն՝ մեկ քայլ ավելի եմ մոտենում իմ երազանքին: Ինֆորմատիկայի ֆակուլտետում ուսանելն ինձ հնարավորություն է տալիս խորապես ուսումնասիրելու ոլորտի նրբությունները և դրան զուգահեռ զարգացնելու լեզվական հմտությունները: Բացի այդ՝ Թուլուզի համալսարանի հետ համագործակցությունը մեզ հնարավորություն է ընձեռում օգտվելու նաև այդ ոլորտի ֆրանսիական և եվրոպական մեծ փորձից, ինչի շնորհիվ զարգացնում ենք մասնագիտական և անձնական մի շարք հմտություններ՝ թիմային աշխատանք կատարելու ունակություն, վերլուծական և առաջնորդություն, որոնք, անշուշտ, կօգնեն ներկայիս ամենապահանջված մասնագիտական ոլորտում դառնալու միջազգայնորեն մրցունակ մասնագետներ:
Ապագա դիմորդներին խորհուրդ եմ տալիս վայելել ուսանողական կյանքը, անդադար սովորել, ինքնակրթվել և չմոռանալ, որ կրթությունը նպատակին հասնելու լավագույն ճանապարհն է:

Քրիստինա Սարգսյան
դեկան

Համակարգչային գիտությունը մշտապես ընդլայնվող, դինամիկ ոլորտ է, որտեղ համախմբվում են հիմնարար գիտելիքն ու կիրառական մտածողությունը՝ ստեղծելով նորարարությունների անսպառ հարթակ: ԻԿՄ ֆակուլտետում մենք հավատում ենք, որ ապագան կերտում են նրանք, ովքեր համարձակվում են միավորել տրամաբանությունն ու ստեղծարարությունը: Մեր առաքելությունն է բացել դռներ այն ուսանողների համար, որոնք լայնախոհ են և մեծ երազանքներ ունեն: Մենք նրանց կողքին ենք, որպեսզի դառնան միջազգային միջավայրում մրցունակ, պահանջված մասնագետներ և կառուցեն կայուն ու իմաստավորված կարիերա հենց այստեղ՝ իրենց հայրենիքում՝ Հայաստանում:

Ալեն Կրուզիլ
համադեկան

Ուրախ եմ, որ հետաքրքրված եք ՀՖՀՀ-ի ինֆորմատիկայի ֆակուլտետով: ՀՖՀՀ-ի ինֆորմատիկայի ֆակուլտետը մեծ տեղ է հատկացնում նախագծերի կառավարմանը, կրթում է ապագա ինժեներների և ինֆորմատիկայի ոլորտի մասնագետների: Ընտրելով ՀՖՀՀ-ն՝ Դուք կընդունվեք նաև Թուլուզի համալսարան և կստանաք այնպիսի կրթություն, որ միավորում է ինֆորմատիկայի ոլորտում հայկական և ֆրանսիական լավագույն փորձառությունը:

Մասնագիտական աշխատանքի հեռանկարներ

- Ծրագրակազմի/ ծրագրային ապահովման մշակման մասնագետ

- Ծրագրավորողների կամ ծրագրային արտադրանքի (պրոդուկտի) թիմի ղեկավար բարձր տեխնոլոգիաների ոլորտում

- Տվյալների հենքերի ադմինիստրատոր

- Համակարգչային ցանցերի ադմինիստրատոր

Կրթության շարունակության հնարավորություններ

- Ծրագրի շրջանավարտները կարող են իրենց ուսումը շարունակել ՀՖՀՀ-ի, Ֆրանսիայի Թուլուզի և այլ համալսարանների ինֆորմատիկա (համակարգչային գիտություն) մասնագիտության տարբեր մասնագիտացումներով:

Գործունեության հիմնական ոլորտներ

- Համակարգչային գիտություն

- Ներդրված համակարգեր. խելացի քաղաք

- Արդյունաբերություն 4.0

- Թվային կառավարման համակարգեր ըստ ոլորտների

- Թվային համակարգերի շահագործման հուսալիություն և անվտանգություն

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ակադեմիական գործընկեր՝
Ժան Մուլեն Լիոն 3 համալսարան

Ուսման տևողությունը՝ 4 տարի

Իրավաբանները կարևոր դեր ունեն հասարակական կյանքի բոլոր ոլորտներում՝ արդարադատության, ինչպես նաև տնտեսական, սոցիալական, մշակութային, կրթական և քաղաքական ոլորտներում:

Իրավագիտություն սովորելը հնարավորություն է տալիս ուսումնասիրելու հասարակությունն ու հասարակության անդամների միջև հարաբերությունները, ընկալելու հասարակության հիմնարար խնդիրները և դրանց լուծումների իրավական հենքը և ընդհանրապես զարգացնելու քաղաքացիական գիտակցություն: Իրավագիտություն սովորելը նշանակում է հասարակության մեջ ունենալ ակտիվ և կենտրոնական դեր խաղալու ցանկություն:

Իրավագիտության բակալավրի աստիճանի կրթական ծրագիրը ընդհանրական է, այսինքն՝ ՀՖՀՀ-ի իրավագիտության ֆակուլտետում ուսանելու չորս տարիների ընթացքում ուսանողները բացահայտում են և՛ հանրային, և՛ մասնավոր, և՛ ներպետական, և՛ միջազգային իրավունքի ոլորտները:

Առանձնահատուկ է նաև այն, որ բացի հայկական իրավունքից՝ դասավանդվում է նաև ֆրանսիական իրավունքը՝ ուսանողներին հնարավորություն տալով տարբեր կողմերից դիտարկելու մասնագիտության առանձնահատկությունները: Նման համապարփակ և ընդհանրական կրթական ծրագիրը նպատակ ունի ձևավորելու իրավական գիտելիքների և իրավական մշակույթի ամուր հիմք:

Իրավագիտության ֆակուլտետի կրթական ծրագիրը մշակված է Ֆրանսիայի՝ մեծ հեղինակություն վայելող Ժան Մուլեն Լիոն 3 համալսարանի համապատասխան կրթական ծրագրի ձևաչափով՝ ներառելով նաև ՀՀ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան տարրեր:

ՀՖՀՀ-ի կրթական ծրագրի կարևոր առանձնահատկություններից է ոլորտի առաջատար մասնագետների՝ հայ և ֆրանսիացի դասախոսների ներգրավվածությունը, որոնք դասավանդման ընթացքում համադրում են տեսությունը և իրավիճակային իրական խնդիրները՝ վերցված իրենց աշխատանքային փորձից:

Սովորելով այս ֆակուլտետում՝ ուսանողները ձեռք կբերեն գիտելիքներ ինչպես Հայաստանի իրավունքի, հայկական դատաիրավական համակարգի, միջազգային և եվրոպական իրավունքի, այնպես էլ Ֆրանսիայի դատաիրավական համակարգի և իրավունքի հիմնական բնագավառների մասին:

Ուսանողների մեջ կզարգանան իրավիճակները իրավաբանորեն վերլուծելու, որակելու, համապատասխան իրավական կանոններ կիրառելու մասնագիտական, ինչպես նաև իրավաբանական գրավոր ու բանավոր խոսքի և հետազոտական աշխատանքներ կատարելու հմտություններ:

ՀՖՀՀ-ում առօրյան հագեցած է. նույն օրը ուսանողները կարող են լսել մասնագիտական առարկայի դասախոսություն (օրինակ՝ քաղաքացիական իրավունք), որին կհաջորդեն գործնական պարապմունքները:

Դրանք անցկացվում են ավելի փոքր խմբերով, ինչը դասախոսի հետ մտքեր փոխանակելու և քննարկումներին մասնակցելու, ինչպես նաև դասերի ընթացքում ձեռք բերված տեսական գիտելիքները գործնական վարժությունների միջոցով կիրառելու հնարավորություն է ստեղծում:

Նույն օրվա ընթացքում դասացուցակում կարող են ներառված լինել նաև ֆրանսերենի և անգլերենի դասեր: Բացի այդ՝ համալսարանում տեղի են ունենում զանազան միջոցառումներ՝ հրավիրված դասախոսներ, կարճ արտածրագրային դասընթացներ և այլն:

Հնարավորություն է տրվում նաև մասնակցելու զանազան մրցույթների (դատախաղ, բանավեճ և այլն) և արտածրագրային այլ միջոցառումների:

Սովորելու ծարավ ունեցող ուսանողները գերիագեցած օրակարգ կունենան ՀՖՀՀ-ում:

Իռեն Դեմիրճյան
Իրավագիտության ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողուհի

ՀՖՀՀ-ում ուսանելն ինձ համար նոր փորձառությունների և ինքնաբացահայտման ուղի դարձավ: Սովորել Հայաստանում ֆրանսիական համալսարանի իրավագիտության ֆակուլտետում նշանակում է գտնվել անվերջ աճի մի ճանապարհի վրա, որտեղ գիտելիքը դառնում է ինքնության մի մաս: Կրթական ծրագիրը հավասարապես ներառում է թե՛ տեսական գիտելիքներ, թե՛ գործնականում դրանց կիրառման լայն հնարավորություններ: Ուսանողները հնարավորություն են ունենում ներգրավվելու իրավաբանական կլինիկայի աշխատանքներում, մասնակցելու դատախաղերի, զարգացնելու իրենց վերլուծական, փաստարկման և հրապարակային խոսքի հմտությունները: Բացի այդ՝ խրախուսվում է ուսանողների մասնակցությունը տեղական և միջազգային տարբեր ծրագրերին ու նախաձեռնություններին՝ տալով հարթակ ինքնադրսևորման, փորձի ձեռքբերման և մասնագիտական աճի համար:

Շնորհիվ փորձառու և բարձր որակավորում ունեցող պրոֆեսորադասախոսական կազմի՝ սովորում ենք ոչ թե օրենքը ընդունել որպես բացարձակ ճշմարտություն, այլ հասկանալ՝ որն է դրա հիմքում ընկած արժեքային համակարգը: Ուսումն այստեղ տալիս է ոչ միայն իրավական գիտելիք, այլև հմտություն՝ բազմակողմանի դիտարկելու խնդիրները, արժևորելու փաստերը և գտնելու պատասխաններ այնտեղ, որտեղ սկզբում միայն հարցեր էին ծագում: Այս բաժնում սովորելը ուղի է՝ գիտելիքից մինչև ինքնաճանաչում, տեսությունից մինչև գործնականում ողջամտորեն կիրառելու կարողություն: Այս կրթական միջավայրը նպաստում է նաև անձնական աճին՝ ձևավորելով պատասխանատու, ինքնավստահ և նախաձեռնող մասնագետների: Այստեղ կրթությունը դառնում է վստահություն, իսկ գիտելիքը՝ ապագայի հիմք:

Կարին Յովսէփեան
դեկան

Իրավունքի ուսումնասիրումը նախ նշանակում է ուսումնասիրել հասարակությունը, ուսումնասիրել հասարակական կյանքը կարգավորող կանոնների ամբողջությունը՝ վերլուծելով դրանց մեխանիզմները թե՛ ազգային, թե՛ միջազգային տեսանկյուններից: ՀՖՀՀ-ում իրավաբանի մասնագիտությունը Ձեզ հղկում է մեթոդապես, զարգացնում վերլուծական մտածողությունը, տալիս հնարավորություն ունենալու համապատասխան պրոֆիլ տարբեր ղեկավար պաշտոնների համար և Ձեր առջև բազմաթիվ հորիզոններ է բացում:

Քրիստել Գազո
համադեկան

ՀՖՀՀ-ում իրավագիտության բակալավրում սովորելը հավասարազոր է դեպի ապագա նայելուն: Ինչու՞: Որովհետև դա հավասարազոր է ապագա մասնագիտացման համար անհրաժեշտ հիմնարար հմտություններ ձեռք բերելու հնարավորություն ունենալուն: Այն իրականություն է դառնում որոշակի տեխնիկայի տիրապետմամբ (բառապաշարի տիրապետում, մեթոդի կիրառում, դատողությունների համակարգում) և կայուն իրավական մշակույթի ձեռքբերմամբ, որը ներառում է իրավունքի բոլոր բնագավառները:

Աշխատանքային հեռանկարներ պետական և մասնավոր ոլորտներում

- Իրավաբանական և դատաիրավական մասնագիտություններ՝ փաստաբան, նոտար, դատավոր, դատախազ, քննիչ (համապատասխան մրցույթներ անցնելուց հետո)

- Իրավախորհրդատվություն իրավաբանական գրասենյակներում, ձեռնարկատիրական ընկերություններում, բանկում, ապահովագրական ընկերություններում, հասարակական կազմակերպություններում

- Իրավաբան՝ վարչական կառույցներում, միջազգային կազմակերպություններում, դատարանում, ազգային անվտանգության և պաշտպանության ծառայություններում

- Իրավաբանական հետազոտություններ, դասավանդում

- Դիվանագիտական ծառայություն և այլն

Կրթության շարունակության հնարավորություններ

- Փաստաբանական ակադեմիայում

- Մասնավոր կամ հանրային իրավունքի մագիստրատուրայում

- Քաղաքագիտության, միջազգային հարաբերությունների, կառավարման և հումանիտար գիտությունների այլ ոլորտների մագիստրատուրաներում (Հայաստանում, Ֆրանսիայում և այլուր)

COMMUNICATOR

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ակադեմիական գործընկեր՝
Ժան Մուլեն Լիոն 3 համալսարան

Ուսման տևողությունը՝ 4 տարի

Տնտեսության ցանկացած ոլորտ ունի տարբեր կառավարիչների կարիք: Վերջինս կախված չէ տնտեսության կառուցվածքային փոփոխություններից, հետևաբար, կառավարման մասնագետը, աշխատաշուկայում կառուցվածքային փոփոխություններից անկախ, իր ողջ կյանքի ընթացքում ձեռք է բերում ցանկացած ոլորտում (ավանդական և տեխնոլոգիական) մրցունակ լինելու և աշխատանք գտնելու լայն հնարավորություններ:

Սովորելով կառավարման ֆակուլտետում՝ ուսանողը ծանոթանում է տարբեր ոլորտների (գործարարություն, մարքեթինգ, թվայնացում, նախագծերի կառավարում, ֆինանսներ, հաշվապահություն և այլն) առանձնահատկություններին, որոնց շնորհիվ ձեռք է բերում ոչ միայն կառավարման մասնագիտացում, այլ նաև առավել տեսանելի և հիմնավորված է դառնում կրթական և գործնական ուղիների հետագա ընտրությունը (մագիստրոսական կրթություն, աշխատանքային ոլորտ, սեփական բիզնես և այլն):

Կառավարման ֆակուլտետի կրթական ծրագիրը մշակված է Ֆրանսիայի՝ մեծ հեղինակություն վայելող Ժան Մուլեն Լիոն 3 համալսարանի համապատասխան կրթական ծրագրի ձևաչափով՝ ՀՀ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան տարրերի ներառմամբ:

Այն ընդգրկում է մի շարք առարկաներ, որոնց դասավանդումն իրականացվում է միաժամանակ տեսական և գործնական ձևաչափով. սա ենթադրում է, որ ուսանողները, բացի տարբեր դասախոսությունների և սեմինարների մասնակցելուց, նաև ունենում են գործնական դասեր, ինչպես նաև նախագծահեն ուսումնառություն, ինչը հնարավորություն է տալիս գործնականում կիրառելու և ընդլայնելու համալսարանում ստացած գիտելիքները, զարգացնելու թիմային աշխատանքի, վերջնաժամկետները պահպանելու և ժամանակի կառավարման հմտությունները:

Ընդ որում, ամեն տարի կրթական ծրագիրը համալրվում է նոր՝ ժամանակակից առարկաներով, ինչպիսիք են թվայնացումը, արհեստական բանականության կիրառումը, կրիպտոարժույթը (web 3.0) և այլն:

Հարություն Զաքարյան
Կառավարման ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանող

Ֆրանսիական համալսարանը՝ ապագայի հարթակ
Մեկ տարուց կավարտեմ և կստանամ բակալավրի աստիճան, բայց եթե կյանքը մեկ անգամ էլ ինձ նման հնարավորություն տար, կրկին կընտրեի ՀՖՀՀ-ն: Ինչո՞ւ: Որովհետև ՀՖՀՀ-ն ոչ միայն ուսումնառություն է, այլև երկխոսություն ավանդականի ու նորի, ազգայինի ու միջազգայինի միջև: Ֆրանսիական կրթական համակարգ, դրանից բխող որակ՝ համադրված հայաստանյան իրողություններին: Արդյունքում մրցունակ ես դառնում հայաստանյան շուկայում, ինչպես նաև քո առջև բացվում են աշխարհի դռները: Որովհետև Ֆրանսիական համալսարանում քեզ ոչ միայն գիտելիք են փոխանցում, այլև խնդիրներ լուծելու, առաջնորդություն ստանձնելու ու գաղափարների հետևից գնալու վստահություն: Իսկ մասնագիտական ուսումնառությունդ ուրվագծում է իմացությունների ու հմտությունների այնպիսի համակարգ, որի շնորհիվ հասկանում ես՝ կառավարումը ոչ միայն թվեր ու պլաններ են, այլև մարդկանց ընկալելու, հասկանալու ու ջանքերը համատեղելու հատկություն: Իսկ եթե կրթվելուց բացի ուզում ես նաև վայելել ուսանողությունդ՝ ընկերներ, հավաքույթներ, համատեղ մտահղացումներ ու մի քիչ էլ խենթություններ, ապա դպրոցից հետո կյանքի լավագույն սցենարը ՀՖՀՀ-ում սովորելն է. առաջիկա չորս տարիներիդ հետ կարող ես ժամադրվել այստեղ: Ու հետո կափսոսաս, որ դրանք ավարտվում են...

Հրանտ Հարությունյան
դեկան

Կառավարման ֆակուլտետը նպատակ ունի պատրաստելու տնտեսության բոլոր ոլորտների համար կառավարման բանիմաց մասնագետներ: Հատկանշական են ֆինանսական, արդյունաբերական, ծառայությունների և SS ոլորտները, որտեղ ՀՖՀՀ շրջանավարտներն արդեն իսկ զբաղեցրել են հաստատուն դիրքեր: Ընդ որում, վերոնշյալը տեղին է ինչպես ՀՀ աշխատաշուկայի, այնպես էլ միջազգային աշխատաշուկաների համար, քանի որ կրթական ծրագիրը համահունչ է ֆրանսիական Լիոն 3 համալսարանի ծրագրին:

Ժան-Բատիստ Կարտիե
համադեկան

ՀՖՀՀ-ն հայտնի է որպես կառավարման ոլորտում լավագույն կրթություն տրամադրող հաստատություններից մեկը Հայաստանում: ՀՖՀՀ-ի կառավարման ֆակուլտետը գիտելիքների և հմտությունների մեծ պաշարի տրամադրման միջոցով պատրաստում է իր ուսանողներին՝ զբաղեցնելու բարձր պաշտոններ տեղական, տարածաշրջանային և միջազգային ասպարեզում՝ ինչպես մասնավոր, այնպես էլ հանրային ոլորտներում: Նրանք կարող են նաև դառնալ սոցիալապես պատասխանատու ձեռնարկատերեր:

Աշխատանքային հեռանկարներ

- Կազմակերպության/ընկերության ղեկավար
- Կոմերցիոն տնօրեն
- Վաճառքի տնօրեն
- Ֆինանսական ղեկավար
- Բանկային գործի և ապահովագրության մասնագետ
- Ֆինանսական վերլուծաբան/խորհրդական
- Գովազդային/մարքեթինգային գործակալության տնօրեն
- Միջազգային առևտրի պատասխանատու
- Բիզնես գործընթացների օպտիմալացման և թվայնացման մասնագետ
- Ծրագրերի ղեկավար
- Բիզնես վերլուծաբան
- Վաճառքի մասնագետ
- Գովազդային մասնագետ
- Լոգիստիկայի մասնագետ
- Գնումների մասնագետ

Կրթության շարունակության հնարավորություններ

Հեռանկարային են նաև մասնագիտական ուսումը շարունակական դարձնելու հնարավորությունները (միջազգային մագիստրատուրա, ասպիրանտուրա և այլն), քանի որ ստանալով ֆրանսիական բակալավրի աստիճան (դիպլոմ)՝ բացվում են դեպի միջազգային բուհեր և մագիստրոսական ծրագրեր ներկայացնող տարբեր երկրներ տանող դռները:

Կառավարման ֆակուլտետի բակալավրի շրջանավարտները կարող են իրենց ուսումը շարունակել ՀՖՀՀ-ի, Ֆրանսիայի Ժան Մուլեն Լիոն 3 և հայաստանյան ու արտասահմանյան այլ բուհերի մագիստրատուրաներում հետևյալ մասնագիտացումներով.

- Կառավարում
- Բիզնես մոդելավորում
- Առաջնորդություն
- Աուդիտ
- Մարքեթինգ
- Ֆինանսներ
- Միջազգային տնտեսագիտություն

ՄԱՐՔԵԹԻՆԳ

Ակադեմիական գործընկեր՝
Ժան Մուլեն Լիոն 3 համալսարան

Ուսման տևողությունը՝ 4 տարի

Մարքեթինգը խիստ արդիական, հեռանկարային և բարձր վարձատրվող մասնագիտություն է. բոլոր ընկերություններն ու կազմակերպությունները՝ պետական թե՛ մասնավոր, միջազգային թե՛ տեղական, առևտրային թե՛ հասարակական, ունեն մարքեթոլոգների կարիք:

Այս մասնագետները պահանջված են տնտեսության բոլոր բընագավառներում. նրանք մըշակում են մարքեթինգային ռազմավարություն և կյանքի կոչում այն, կատարում են մարքեթինգային պլանների մշակում, մարքեթինգային հետազոտությունների պլանավորում և իրականացում, գովազդային և PR արշավների մշակում, կազմակերպում և իրականացում, բրենդի մշակում և կառավարում, վաճառքների պլանավորում, կառավարում ու կազմակերպում և այլն:

ՀՖՀՀ-ի մարքեթինգի ֆակուլտետն առաջարկում է ուսանողներին ստանալ տեսական և գործնական հիմնարար գիտելիքներ, ձևավորել մարքեթինգի և վաճառքի բնագավառներում գործունեություն ծավալելու, ղեկավարելու, որոշումներ կայացնելու և կառավարելու կարողություններ, որոնք համապատասխանում են միջազգային և հայկական մասնագիտական չափանիշներին:

ՀՖՀՀ-ի մարքեթինգի ֆակուլտետը շուրջ 20 տարի պատրաստել է աշխատաշուկայում պահանջված, մասնագիտական բարձր որակավորում ունեցող մասնագետներ, որոնք աշխատում են ՀՀ-ի և արտերկրի առաջատար ընկերություններում և կազմակերպություններում:

Այս ֆակուլտետի շրջանավարտները զբաղվում են մարքեթինգային ու առևտրային գործունեությամբ հայկական և միջազգային ընկերություններում և մասնագիտական շփման համար տիրապետում են նվազագույնը 4 օտար լեզվի:

Ֆակուլտետի կրթական ծրագիրը մշակված է Ֆրանսիայի՝ մեծ հեղինակություն վայելող Ժան Մուլեն Լիոն 3 համալսարանի համապատասխան կրթական ծրագրի ձևաչափով՝ ՀՀ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան տարրերի ներառմամբ:

ՀՖՀՀ-ի մարքեթինգի ֆակուլտետի կարևոր առանձնահատկություններից է նորարար մանկավարժական մոտեցումների՝ խնդիրների վրա հիմնված ուսումնառության (Problem-based learning, PBL) և հետազոտահեն ուսումնառության (Research-based learning, RBL) կիրառումը, որ նպաստում է ուսանողների գործնական կարողությունների, ինչպես նաև մի շարք փափուկ հմտությունների (ինչպես օրինակ՝ թիմային աշխատանք կատարելու, վերջնաժամկետները պահպանելու և ժամանակի կառավարման հմտությունները և այլն) զարգացմանը՝ նախապատրաստելով նրանց աշխատաշուկային:

Մասնագիտական դասընթացների շրջանակում ուսանողներն աշխատում են ՀՀ-ում գործող առաջատար ընկերությունների կողմից ներկայացված իրական նախագծերի / քեյսերի շուրջ հենց այդ ընկերությունների ներկայացուցիչների հետ, ինչ նրանց հնարավորություն է տալիս պատրաստվելու ոլորտային խնդիրների լուծմանը շուկայի ներկա պահանջներին համապատասխան:

Դասավանդման և ուսումնառության նման նորարար մոտեցումների կիրառությունն ուսանողներին հնարավորություն է տալիս նաև ծանոթանալու ապագա գործատուների հետ՝ հաճախ ստանալով աշխատանքի առաջարկներ:

Գործնական պարապմունքների ընթացքում դասավանդվող մասնագիտական առարկաների (մարքեթինգի հիմունքներ, PR, թվային մարքեթինգ, մարքեթինգ միքս, որակական և քանակական մեթոդներ, մարքեթինգ պլան և այլն) շրջանակում ուսանողները ներկայացնում են խմբային աշխատանքներ և նախագծեր, որոնք ներառում են իրական շուկայական իրավիճակների ուսումնասիրության վերլուծություն, լուծումների և ծրագրերի առաջարկներ:

Լուսինե Մեսրոբյան
Մարքեթինգի ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողուհի

ՀՖՀՀ-ն համալսարան է, որտեղ կարող ես ձեռք բերել հրաշալի ընկերներ, ունենալ հագեցած և հետաքրքիր առօրյա և, որ ամենակարևորն է, սովորել:
Վստահ կարող եմ ասել, որ մարքեթինգի ֆակուլտետում սովորելն ունի մի շարք առավելություններ թե՛ մասնագիտական և թե՛ անձնական աճի համար:
Մարքեթինգի ֆակուլտետի դասախոսական կազմը ներառում է փորձառու մարքեթոլոգների (նաև Ֆրանսիայից ժամանած դասախոսների), ինչը հիանալի հնարավորություն է սովորելու ոլորտում արդեն իսկ հաջողություն գրանցած մասնագետներից:
Այստեղ սովորելով՝ մենք զարգացնում ենք ստեղծագործական միտքը, տվյալների վերլուծության, նախագծերի կառավարման և հաղորդակցման հմտությունները, որոնք կարևոր են մարքեթինգի ցանկացած ճյուղում հաջողելու համար և կիրառելի են մի շարք այլ ոլորտներում:
Ապագա դիմորդներին խորհուրդ եմ տալիս սովորելուն զուգահեռ ակտիվորեն մասնակցել համալսարանի կողմից կազմակերպվող գիտաժողովներին, հանդիպումներին և գիտամշակութային միջոցառումներին, որոնք էլ ավելի հետաքրքիր և հագեցած կդարձնեն համալսարանական առօրյան:

Նաիրա Հայրապետյան
դեկան

Այսօր մենք կանգնած ենք որակյալ և մրցունակ մասնագետների պատրաստման հավակնոտ խնդրի առջև, մասնագետներ, որոնք ունակ կլինեն գրագետ որոշումներ կայացնելու ամենադժվար իրավիճակներում, առաջնորդներ, որոնք կկարողանան արձագանքել նաև համաշխարհային թվային տնտեսության մարտահրավերներին: Եթե ցանկանում եք ստանալ բարձրորակ, ժամանակակից կրթություն մարքեթինգի, վաճառքի, թվային մարքեթինգի, գովազդի, հանրային կապերի (PR) բնագավառներում, ընտրե՛ք ՀՖՀՀ -ի մարքեթինգի ֆակուլտետը:

Ժան-Բատիստ Կարտիե
համադեկան

ՀՖՀՀ-ի մարքեթինգի ֆակուլտետն իր ուսանողներին հիմնարար գիտելիքներ է փոխանցում մարքեթինգի ոլորտում. շուկայի ուսումնասիրություններ, մարքեթինգային ռազմավարություններ, հաղորդակցություն սոցիալական ցանցերում, առևտրային բանակցություններ: Շրջանավարտները ոչ միայն մարքեթոլոգներ, այլև նախաձեռնող, նախագծեր կազմող անձինք են դառնում: Այս ֆակուլտետում սպասում ենք ստեղծարար մարդկանց:

Մասնագիտական աշխատանքային հեռանկարներ

- Մարքեթինգի մասնագետ. Մարքեթոլոգ-հետազոտող, Մարքեթոլոգ-վերլուծաբան, Մարքեթոլոգ-խորհրդատու, Բրենդ մենեջեր, Մերչենդայզեր

- Մարքեթինգային հաղորդակցություններ. PR մասնագետ, Գովազդի մասնագետ, Քոփիրայթեր (Copywriter), Կոնտենտ մարքեթինգի մասնագետ

- Թվային մարքեթինգ. Սոցիալական մեդիա մարքեթինգի (SMM), մասնագետ , Ինֆլյուենսեր մարքեթինգի մասնագետ, Թարգեթինգի մասնագետ

- Բիզնեսի զարգացում. Ծրագրերի ղեկավար,Բիզնեսի զարգացման մասնագետ, Հաճախորդների մենեջեր (Account Manager), Վաճառքի մասնագետ

Կրթության շարունակության հնարավորություններ

Մարքեթինգի ֆակուլտետի բակալավրի շրջանավարտները կարող են իրենց ուսումը շարունակել ՀՖՀՀ-ի, Ֆրանսիայի Ժան Մուլեն Լիոն 3 և հայաստանյան ու արտասահմանյան այլ բուհերի մագիստրատուրաներում հետևյալ մասնագիտացումներով.

- Թվային մարքեթինգ
- Նորարարական մարքեթինգ
- Լյուքս դասի ապրանքների մարքեթինգ
- Հոգեբանություն և սպառողի վարքագիծ
- Թվային հաղորդակցություն
- Մեդիաբիզնես
- Գովազդ և հանրային կապեր
- Նոր մեդիաներ և ժամանակակից հաղորդակցությունների կառավարում
- B2B մարքեթինգ
- Միջազգային մարքեթինգ

ՖԻՆԱՆՍՆԵՐ

Ակադեմիական գործընկեր՝
Ժան Մուլեն Լիոն 3 համալսարան

Ուսման տևողությունը՝ 4 տարի

Հետազոտությունները ցույց են տալիս, որ աշխատաշուկայում պահանջված մասնագետների թվաքանակով ֆինանսաբանկային ոլորտը չի զիջում անգամ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտին:

Որքան էլ զարգանան (AI) արհեստական բանականության տեխնոլոգիաները, միևնույն է, դրանք չեն կարող փոխարինել ֆինանսական վերլուծության, աուդիտի ձեռնարկության գնահատման բանկային ու ապահովագրական ոլորտների և ֆինանսական այլ մասնագիտություններին:

Արդյունքում, ըստ որոշ հետազոտությունների, ֆինանսական շուկայում աշխատավարձի մակարդակը շարունակում է մնալ համեմատաբար բարձր:

Տնտեսության ցանկացած ոլորտ ունի ֆինանսիստի և/կամ հաշվապահի պահանջ:

Այդ պահանջն անկախ է տնտեսության կառուցվածքային փոփոխություններից:

Ուստի ֆինանսների գծով մասնագետը, անկախ տնտեսության կառուցվածքային փոփոխություններից, իր ողջ կյանքի ընթացքում լայն հնարավորություններ է ձեռք բերում ցանկացած ոլորտում:

Ֆինանսներ մասնագիտացումն օգնում է տիրապետելու թե՛ ֆինանսական, թե՛ հաշվապահական և թե՛ հարկային ոլորտի նրբություններին, որոնք չափազանց անհրաժեշտ են հատկապես նոր բիզնեսի հիմնադրման փուլում:

ՀՖՀՀ ֆինանսների ֆակուլտետի կրթական ծրագիրը մշակված է Ֆրանսիայի՝ մեծ հեղինակություն վայելող Ժան Մուլեն Լիոն 3 համալսարանի համապատասխան կրթական ծրագրի ձևաչափով՝ ՀՀ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան տարրերի ներառմամբ: Ընդ որում, ամեն տարի կրթական ծրագիրը համալրվում է նոր՝ ժամանակակից առարկաներով, ինչպիսիք են թվայնացումը, արհեստական բանականության կիրառումը, կրիպտոարժույթը (web 3.0) և այլն:

Դասավանդող կազմի զգալի մասը Ֆրանսիայից ժամանած դասախոսներ են: Դասավանդում են նաև բարձր որակավորում ունեցող և մի շարք հեղինակավոր կազմակերպություններում (ՀՀ ԿԲ, գերատեսչություններ, մասնավոր բանկեր և այլ ընկերություններ) աշխատող հայ մասնագետներ:
Առանձնահատուկ շեշտադրում ունի կրթության կիրառական մասը՝ հիմնված շուկայում արդի պահանջների վրա:

Ուսանողները սովորում են կատարել ֆինանսական վերլուծություններ և եզրակացություններ ներդրումների և այլ ֆինանսական գործարքների վերաբերյալ:
Բացի այդ՝ ծանոթանում են ռիսկերի կառավարման և ռեսուրսների բաշխման նրբություններին, ուսումնասիրում են միջազգային ֆինանսները, համաշխարհային ֆինանսական սկզբունքները, ներառյալ փոխարժեքները, միջազգային կապիտալի շուկաները և տարբեր երկրներում բիզնես վարելու ռիսկերն ու հնարավորությունները:

ՀՖՀՀ ուսանողները ֆինանսների ֆակուլտետում ձեռք բերած մասնագիտական հմտությունները հետագայում կկարողանան կիրառել հայաստանյան և ֆրանսիական բանկերում, ինչպես նաև այլ ֆինանսական կառույցներում աշխատելու ընթացքում:

ՀՖՀՀ ֆինանսների ֆակուլտետն ունի մի յուրահատկություն. այն ոչ թե հենքային կրթության, այլ մասնագիտական պրոֆեսիոնալ ուղղվածություն ունի:
Այս մոտեցումը համալսարանում որդեգրված է՝ ըստ ֆրանսիական Licence Pro մոտեցման:

Ֆակուլտետում գործում է նաև դուալ կրթության համակարգ, ըստ որի՝ ուսանողներն իրենց ուսումնառության մի մասն անց են կացնում հենց գործատուների հետ աշխատավայրում:
Սա հնարավորություն է ընձեռում ստանալու ոչ միայն տեսական գիտելիքներ, այլև հատկապես պրակտիկ աշխատաշուկայի կարիքներից բխող արդի հմտություններ և կարողություններ:

Ֆինանսների ֆակուլտետում աշխատանքի վրա հիմնված ուսումնառության գաղափարը ՀՖՀՀ-ն կիրառում էր դեռ շատ վաղուց, այդուհանդերձ, նշյալ մոտեցումը նոր թափ ու կարևորություն ստացավ “**Erasmus+ WBL4JOB**” նախագծի շրջանակներում, որի համակարգողը ՀՖՀՀ-ն է:

Անի Գևորգյան
Ֆինանսների ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողուհի

ՀՖՀՀ-ի ֆինանսների ֆակուլտետում ուսանելը մեծ հնարավորություն է՝ խորապես հասկանալու ֆինանսական աշխարհի կառուցվածքն ու մարտահրավերները: Մենք ուսումնասիրել ենք բազային և արդիական ֆինանսական առարկաներ՝ սկսած հաշվապահական հաշվառումից, ֆինանսական և կառավարչական հաշվապահությունից մինչև բանկային գործ, ապահովագրություն և ռիսկերի կառավարում: Դասախոսությունները համադրվում են պրակտիկ խնդիրների վերլուծությամբ, մասնագիտացված ծրագրերի կիրառմամբ, ինչպես նաև գործնական իրավիճակների ուսումնասիրմամբ: Այդ ամենն օգնել է ինձ ձեռք բերելու վերլուծական մտածողություն, ֆինանսական հաշվետվությունների ընթերցման և պատրաստման ունակություն, ռիսկերը գնահատելու հմտություն և թիմային աշխատանքում արդյունավետ լինելու կարողություն:
2025 թվականին ես հնարավորություն ունեցա մեկ կիսամյակ սովորելու Ֆրանսիայի Ժան Մուլեն Լիոն 3 համալսարանում: Այդ միջազգային փորձառությունը խորացրեց իմ գիտելիքները հատկապես եվրոպական ֆինանսական մոդելների, շուկաների ու կարգավորող համակարգերի վերաբերյալ՝ միաժամանակ զարգացնելով լեզվական, մշակութային ու սոցիալական հմտություններս:
ՀՖՀՀ-ն հարթակ է, որտեղ հնարավոր է միավորել ակադեմիական բարձր մակարդակը, կիրառական գիտելիքներն ու միջազգային փորձառությունը: Ֆինանսների ֆակուլտետն առաջարկում է այնպիսի ուսումնական միջավայր, որը պատրաստում է մրցունակ մասնագետներ թե՛ միջազգային ասպարեզի, թե՛ տեղական շուկայի համար:
Իմ խորհուրդը ապագա ուսանողներին՝ եղե՛ք ակտիվ, օգտագործե՛ք ՀՖՀՀ-ի՝ թե՛ դասերին, թե՛ միջազգային փոխանակման ծրագրերին մասնակցելու և թե՛ պրակտիկա անցնելու բոլոր հնարավորությունները, մշտապես հետաքրքրվե՛ք աշխարհում տեղի ունեցող ֆինանսական զարգացումներով: Այդպես Դուք ոչ թե պարզապես մասնագիտություն ձեռք կբերեք, այլև կձևավորեք մտածողություն, որը պետք կգա կյանքի ցանկացած ոլորտում:

Հրանտ Հարությունյան
դեկան

Ֆինանսների ֆակուլտետի նպատակը ֆինանսական բոլոր ոլորտների համար բանիմաց մասնագետներ պատրաստելն է: Ոլորտներից հատկանշական են բանկային ու ապահովագրական, ֆինանսական վերլուծության, հաշվապահության և աուդիտի բնագավառները, որտեղ ՀՖՀՀ-ի շրջանավարտները արդեն իսկ զբաղեցրել են հաստատուն դիրքեր: Ընդ որում, վերոնշյալը տեղին է ինչպես ՀՀ աշխատաշուկայի, այնպես էլ միջազգային աշխատաշուկաների համար, քանի որ կրթական ծրագիրը համահունչ է ֆրանսիական Լիոն 3 համալսարանի ծրագրին:

Ժան-Բատիստ Կարտիե
համադեկան

ՀՖՀՀ-ի ֆինանսների ֆակուլտետը հիմնվել է 2014 թվականին. այն ավելի երիտասարդ է, քան այս հաստատության առաջին երեք՝ իրավագիտության, կառավարման և մարքեթինգի ֆակուլտետները: Ուսանել ՀՖՀՀ-ի ֆինանսների ֆակուլտետում նշանակում է ավարտելուց հետո ունենալ այնպիսի գործատուներ, ինչպիսիք են բանկերը, հայկական և միջազգային ֆինանսական կազմակերպությունները, քանզի զինված կլինեք կայուն և հիմնարար գիտելիքներով իրենց ոլորտների արհեստավարժ մասնագետ դասախոսների շնորհիվ:

Մասնագիտական աշխատանքային հեռանկարներ

- Ֆինանսական տնօրեն
- Կազմակերպության/ընկերության ղեկավար
- Գործարարություն ցանկացած ոլորտում
- Հաշվապահ/Աուդիտոր
- Վիճակագիր-տնտեսագետ
- Բանկային գործի և ապահովագրության մասնագետ
- Ֆինանսական վերլուծաբան/խորհրդական
- Միջազգային առևտրի պատասխանատու
- Բիզնես գործընթացների օպտիմալացման և թվայնացման մասնագետ
- Ծրագրերի ղեկավար
- Բիզնես վերլուծաբան
- Լոգիստիկայի մասնագետ
- Գնումների մասնագետ

Կրթության շարունակության հնարավորություններ

Հեռանկարային են նաև մասնագիտական ուսումը շարունակական դարձնելու հնարավորությունները (միջազգային մագիստրատուրա, ասպիրանտուրա և այլն), քանի որ ստանալով ֆրանսիական բակալավրի աստիճան (դիպլոմ)՝ բացվում են միջազգային բուհեր և մագիստրոսական ծրագրեր ներկայացնող տարբեր երկրներ տանող դռները։

Ֆինանսների ֆակուլտետի բակալավրի շրջանավարտները կարող են իրենց ուսումը շարունակել ցանկացած արտասահմանյան և հայաստանյան այլ բուհերի մագիստրատուրաներում հետևյալ ոլորտներում.

- Բանկ և ապահովագրություն
- Ֆինանսներ և աուդիտ
- Կառավարում
- Միջազգային գործարքներ
- Բիզնես մոդելավորում
- Մարքեթինգ

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ

ՀՖՀՀ ուսանողները բակալավրի ավարտական 4-րդ կուրսում անցնում են պարտադիր 7-9-շաբաթյա պրակտիկա, որը դիտարկվում է որպես կրթության մի փուլ մասնագիտական միջավայրում: Պրակտիկան իրականացվում է Հայաստանի և արտերկրի պետական կառույցներում, միջազգային կազմակերպություններում կամ մասնավոր ձեռնարկություններում:

Պարտադիր պրակտիկայի ընթացքում ուսանողները դասեր չեն ունենում:

Լավագույն ուսանողները հնարավորություն են ունենում ամբողջությամբ ֆինանսավորվող պրակտիկա անցնելու Ֆրանսիայում, Շվեյցարիայում կամ Բելգիայում:

Սա աշխարհայացքի ընդլայնման, մասնագիտական ունակությունների զարգացման և միջազգային փորձ ձեռք բերելու հիանալի առիթ է աշխատաշուկա մուտք գործել պատրաստվող ուսանողների համար:

Համալսարանի զարգացման և համագործակցությունների տնօրենությունն աջակցում է ուսանողներին թե՛ պրակտիկան, թե՛ իրենց կեցությունն արտերկրում կազմակերպելու հարցում:

123

2024-2025 ուստարումո **123 ուսանող** հնարավորություն է ունեցել իր **մասնագիտական պրակտիկան անցնելու արտերկրում:**

Արտերկիր մեկնող ուսանողների ընտրությունը կատարվում է մի շարք չափանիշների հիման վրա, ինչպիսիք են **մասնագիտական առարկաների միջին որակական գնահատականը և ֆրանսերենի իմացությունը:**

BIENVENUE
Paris was waiting for you

Love

ԻՆՉՊԵ՞Ս ՊԱՏՐԱՍՏՎԵԼ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆԸ

Հայաստանում ֆրանսիական համալսարանը կազմակերպում է **նախապատրաստական դասընթացներ** դիմորդներին ընդունելության քննություններին պատրաստելու համար:

Դասընթացներին մասնակցությունը նաև հնարավորություն է տալիս ծանոթանալու ՀՖՀՀ-ի առանձնահատկություններին և դասավանդման մեթոդներին:

Դասընթացների ընդհանուր տևողությունը 38 շաբաթ է (2025 թ.-ի սեպտեմբերի 08-ից 2026 թ. մայիսի 29-ը), որոնցից 34 շաբաթը դասերի և 4 շաբաթը քննությունների, արձակուրդների և բաց թողնված դասերի լրացման համար է:

Դասընթացին կարելի է միանալ ինչպես մեկնարկից՝ գրանցվելով **հուլիս-օգոստոս ամիսներին**, այնպես էլ 2-րդ կիսամյակից՝ գրանցվելով նախապես սահմանված ժամկետներում:

Գրանցման հայտերի ընդունումը կատարվում է **միայն առցանց:**

Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկին և գրանցման մանրամասներին կարող եք ծանոթանալ համալսարանի պաշտոնական կայքում:

Դասընթացի վարձավճարներ 2025-2026
Հայոց լեզու՝ 120 000 դրամ
Օտար լեզու՝ 140 000 դրամ
Հասարակագիտություն՝ 150 000 դրամ
Մաթեմատիկա՝ 150 000 դրամ
Խորացված մաթեմատիկա՝ 185 000 դրամ

Տարվա ընթացքում համալսարանը կազմակերպում է **բաց դռների օր** կրթական ծրագրերն ու քննությունները ներկայացնելու և ձեր հարցերին պատասխանելու համար:

ՀՖՀՀ-ն կազմակերպում է նաև փորձնական քննություններ ավարտական դասարանում սովորող աշակերտների համար:

HEDGE FUNDS
DUELLES
PERSPECTIVES

ԻՆՉՊԵ՞Ս ՄԱՍՆԱԿՑԵԼ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ

1

Ներկայացնել հայտ

Ընդունելության մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է գրանցվել **առցանց**:
2026-2027 ուստարվա ընդունելության մրցույթի գրանցման հղումը հասանելի կլինի 2026թ. **մարտի 2-ից ներառյալ մայիսի 29-ը** համալսարանի կայքի ընդունելության էջում:

Գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթեր.

- Լրիվ միջնակարգ կրթության վկայականի լուսածրված (սկանավորված) տարբերակը կամ տեղեկանք դպրոցից 12-րդ դասարանում սովորելու վերաբերյալ
- Անձնագրի կամ նույնականացման քարտի լուսածրված (սկանավորված) տարբերակը, (ծննդյան վկայականի պատճենը չի ընդունվում)
- 3x4 չափի մեկ պաշտոնական ոճի լուսանկար (միայն JPG ձևաչափով)
- ՀՀ քաղաքացիների համար կցագրման վկայականի կամ զինգրքույկի լուսածրված (սկանավորված) տարբերակը
- Գործերի ընդունման համար կատարված վճարման անդորրագիրը (7500 դրամ). հնարավոր է նաև հայտը լրացնելու ժամանակ վճարումը կատարել առցանց
- Առկայության դեպքում 2026-2027 ուստարվա ՀՖՀՀ-ի Licence/ բակալավր ընդունելության կանոնակարգի 2.1.7 և 2.1.10 կետերով սահմանված դիպլոմների/վկայականների լուսածրված (սկանավորված) տարբերակը

2

Մասնակցել քննություններին

ՀՖՀՀ-ի քննություններն անկախ են պետական միասնական քննություններից և հիմնվում են հանրակրթական դպրոցի ծրագրերի վրա :

Այն դիմորդները, որոնք ունեն.

- **ֆրանսերենի** իմացության վկայական՝ **DELF B1 Tout Public** (առնվազն 50 միավոր) կամ DELF Junior B1 (առնվազն 60 միավոր), կամ **DELF Junior B2** (առնվազն 50 միավոր).
- **անգլերենի** իմացության **IELTS Academic** (առնվազն 6՝ բաղադրիչներից յուրաքանչյուրի նվազագույն միավորը պետք է լինի 6), **TOEFL** (առնվազն 70, չեն ընդունվի այն վկայականները, որտեղ բաղադրիչներից մեկի կամ մի քանիսի միավորը ցածր կլինի 17-ից), **Cambridge Assessment English FCE, BEC Vantage, BEC Higher, CAE, CPE** վկայականներ : **TOEFL MyBest Scores** միավորը **չի ընդունվում**.
- **գերմաներենի** իմացության **GOETHE-ZERTIFIKAT B1** (բաղադրիչներից յուրաքանչյուրի նվազագույն միավորը պետք է լինի 60), **TELC Deutsch B1** (առնվազն 180 միավոր), **DSD 1** քննությունը՝ **B1** մակարդակ, **DSD I PRO** քննությունը՝ **B1** մակարդակ, **Test DaF (TDN 4)**, հնարավորություն ունեն հեշտացված կարգով, այսինքն՝ առանց օտար լեզվի քննության ընդունվելու ՀՖՀՀ:

Վերոնշյալ դիմորդները դիպլոմների/վկայականների լուսածրված (սկանավորված) տարբերակը ներկայացնելու դեպքում կստանան **առավելագույն միավոր օտար լեզվի ընդունելության քննությունից:**

Վերոգրյալ փաստաթղթերը պետք է ներկայացվեն/կցվեն գրանցման հայտ ներկայացնելիս:

- **«Կառավարում», «Ֆինանսներ»**, «**Մարքեթինգ» և «Ինֆորմատիկա» (համակարգչային գիտություն)**
մասնագիտությունների այն դիմորդները, որոնք հանձնել են **SAT** մաթեմատիկայից թեստ (Scholastic Aptitude Test) և հավաքել են ՀՖՀՀ-ի կողմից սահմանված միավորը (տե՛ս ստորև), կարող են ներկայացնել թեստի վկայականը հայտ ներկայացնելիս: ՀՖՀՀ-ի կողմից վկայականի հաստատվելուց հետո նրանք մաթեմատիկայի ընդունելության քննությունից կստանան ստորև նշված միավորը.

- **«Կառավարում», «Ֆինանսներ» և «Մարքեթինգ»**
մասնագիտությունների գծով այն դիմորդները, որոնք **SAT** թեստի մաթեմատիկայից հավաքել են 630-ից 800 միավոր, մաթեմատիկայի ընդունելության քննությանը կստանան 56.7-ից մինչև 72 միավոր 100 հնարավորից: Այսինքն՝ SAT թեստի գնահատականը կբազմապատկվի 0.09 գործակցով:

- **«Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)»**
մասնագիտության գծով այն դիմորդները, որոնք SAT թեստի մաթեմատիկայից հավաքել են 650-ից 800 միավոր, մաթեմատիկայի ընդունելության քննությանը կստանան 65-ից 80 միավոր 120 հնարավորից: Այսինքն՝ SAT թեստի գնահատականը կբազմապատկվի 0,1 գործակցով:

Թեստի վկայականի վաղեմության ժամկետը չպետք է գերազանցի երկու տարին:
Սահմանված միավորներից ցածր արդյունքով վկայականները չեն ընդունվելու:

Իրավագիտություն

Քննություններ	Քննության տևողություն	Առավելագույն միավոր	Մրցույթին մասնակցելու համար նվազագույն միավոր
Հասարակագիտություն	2,5 ժամ	100	35
Հայոց լեզու	2,5 ժամ	80	28

Կառավարում, Մարքեթինգ, Ֆինանսներ

Քննություններ	Քննության տևողություն	Առավելագույն միավոր	Մրցույթին մասնակցելու համար նվազագույն միավոր
Մաթեմատիկա	3,5 ժամ	100	35
Օտար լեզու (ֆրանսերեն, անգլերեն կամ գերմաներեն) **կամ** Հայոց լեզու	2,5 ժամ	80	28

Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա

Քննություններ	Քննության տևողություն	Առավելագույն միավոր	Մրցույթին մասնակցելու համար նվազագույն միավոր
Խորացված մաթեմատիկա	4 ժամ	120	48
Օտար լեզու (ֆրանսերեն, անգլերեն կամ գերմաներեն)	3 ժամ	60	21

ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԵՐ և ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐ

Ուսման վարձավճարներ 2026-2027

Իրավագիտության, կառավարման, մարքեթինգի և ֆինանսների ֆակուլտետներ

1-ին կուրս՝ 1 000 000 դրամ
2-րդ կուրս՝ 1 035 000 դրամ
3-րդ կուրս՝ 1 050 000 դրամ
4-րդ կուրս՝ 1100 000 դրամ

Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետ

1-ին կուրս՝ 1 120 000 դրամ
2-րդ կուրս՝ 1 150 000 դրամ
3-րդ կուրս՝ 1 200 000 դրամ
4-րդ կուրս՝ 1 250 000 դրամ

Կրթաթոշակներ և սոցիալական օգնություն

ՀՖՀՀ-ն բարերարների օգնությամբ աջակցություն է ցուցաբերում ուսանողներին և նրանց ընտանիքներին՝ տրամադրելով կրթաթոշակներ և սոցիալական օգնություն:

Տարակարգերին համապատասխանության դեպքում, համաձայն ՀՀ կանոնակարգող օրենսդրության և համալսարանի ներքին ընթացակարգերի, համալսարանի ուսանողները կարող են օգտվել զեղչերից, կրթաթոշակներից և սոցիալական աջակցությունից, որոնք տրամադրվում են պետության, համալսարանի, Հայաստանում Ֆրանսիայի դեսպանության և համալսարանի գործընկերների միջոցներով:

Առաջադիմության կրթաթոշակ

Առաջադիմության զեղչերը տրամադրվում են լավագույն ուսանողներին՝ հնարավորություն ընձեռելով յուրաքանչյուր տարի օգտվելու **25%, 50%** կամ **100%** զեղչերից։

Սոցիալական աջակցություն

Համալսարանի ուսանողները, որոնք ներառված են պետության և համալսարանի կողմից սահմանված տարակարգերում, և որոնց կարգավիճակը փաստաթղթերով համապատասխանում է այդ տարակարգերի չափանիշներին (օրինակ՝ ընտանիքի սոցիալական կարգավիճակ, ծնողազրկություն, հաշմանդամություն, մասնակցություն պատերազմական գործողություններին կամ մարտական հերթապահություններին, սահմանամերձ տարածքում բնակություն, ուսանողների թիվը ընտանիքում կամ նույն համալսարանում սովորող միաժամանակյա ուսանողների առկայություն և այլն), համապատասխան ընթացակարգով և սահմանված ժամկետներում ներկայացված դիմումի հիման վրա կարող են ստանալ տվյալ տարակարգին համապատասխան սոցիալական աջակցություն/զեղչ։

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԿՅԱՆՔ

Ուսանողական խորհուրդ

UFAR
CONSEIL DES
ÉTUDIANTS

Ուսումնառության առաջին տարվանից ուսանողները կարող են դառնալ ՀՖՀՀ-ի ուսանողական խորհրդի անդամ և իրենց ազդեցությունն ունենալ համալսարանական կյանքի վրա:

ՈՒԽ-ն նպաստում է ուսանողական կյանքի ակտիվությանը, մասնակցում է ուսանողների ֆիզիկական և բարոյական զարգացմանը՝ համագործակցելով ՀՀ և արտերկրի այլ բուհերի և կազմակերպությունների հետ:

Այս կառույցը համալսարանի գործունեության բարելավմանն ուղղված հարցերում կարևոր գործընկեր է, նորարարության և ստեղծարարության աղբյուր:

ՀՖՀՀ ՈՒԽ-ում գործում են մի շարք հանձնաժողովներ՝ իրավաբանական, արտաքին կապերի և հաղորդակցության, ուսումնագիտական, մարքեթինգի և կազմակերպչական, որոնք կարգավորում են կառույցի գործունեության տարբեր ոլորտները:

ՈՒԽ-ին կից գործում են նաև մի շարք ակումբներ՝ կամավորների, երաժշտական, լրագրության, բանավեճի, ընթերցանության, որոնց շնորհիվ համալսարանական կյանքն ավելի աշխույժ է դառնում, և բավարարվում են ուսանողների հետաքրքրությունները:

Էլ. հասցե՝
conseil_etudiants@ufar.am

Facebook

Instagram

Մենթորինգ և աջակցություն

Ուսանողական մենթորինգ
Առաջին կուրսեցիների ինտեգրումը համալսարանին ավելի դյուրին դարձնելու համար ՀՖՀՀ-ում գործում է ուսանողների կողմից մենթորինգ (peer mentoring): Ավագ կուրսերի ուսանողները հանդիպումներ են ունենում նոր ուսանողների հետ, պատասխանում նրանց հուզող հարցերին, աջակցում դժվարությունների հաղթահարման գործում:

Բակալավրի հաջողության ծրագիր

Բակալավրի հաջողության ծրագրի շրջանակում ուսումնառության ընթացքում խնդիրների հանդիպող ուսանողները հնարավորություն ունեն նաև ունենալու դասախոս-մենթոր, որը պարբերաբար հանդիպում է նրանց հետ, զրուցում և ուղղորդում:

Ուսանողների խորհրդատու

ՀՖՀՀ-ն ունի նաև ուսանողների խորհրդատու, որին կարելի է դիմել հետևյալ հարցերով՝ հասկանալ և հաղթահարել ուսումնական գործընթացում ծագող դժվարություններն ու դրանց պատճառները, հասկանալ և նվազեցնել ուսումնական գործընթացից բխող և դրան խանգարող սթրեսային գործոնները, ձեռք բերել հույզերի կառավարման և ինքնակարգավորման տեխնիկաներ, որոնք կօգնեն թուլացնելու գերլարվածությունը, հասկանալու և լուծելու միջանձնային հարաբերություններում ծագող խնդիրները, դժվարությունները ուսանող-ուսանող, դասախոս-ուսանող և նմանատիպ հարաբերություններում:

UFAR ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

www.ufar.am